ՆԱԽԱԳԻԾ 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2011. –Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունվարի 11-ի թիվ 1-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սեփականությունը հանդիսացող Վազգեն Սարգսյան 6 հասցեում գտնվող շենքի՝ Երևանի քաղաքապետի 2010 թվականի հուլիսի 30-ի թիվ 3570-Ա որոշման համաձայն «ք. Երևան, Դեղատան 3» հասցեի տակ գտնվող մասի 2617,6 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, 371.656.258,00 ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով տարածքը և դրա տակ գտնվող ու օգտագործման և սպասարկման համար հատկացված համապատասխան հողամասը /այսուհետ՝ գույք/:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամրացնել <<Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին:

3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի հետ ապահովել սույն որոշումից բխող պայմանագրի կնքումը, հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև գույքային իրավունքների պետական գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունվարի 1-ի թիվ 1-Ա որոշումը և նպատակ է հետապնդում բարելավել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի շենքային պայմանները, ապահովել աշխատակազմի բնականոն գործունեության շարունակականությունը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: